Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն – 5

ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ՆԻՍՏԻ

ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ԳՐԻԳՈՐ ԴԱՏՈՒՄՅԱՆԸ

Ավագանու 15 անդամներից նիստին մասնակցում էին 11-ը՝ Նորիկ Անդրեասյանը, Ազատ Զաքարյանը, Արտաշես Խաչատրյանը, Աշոտ Հունանյանը, Վահագն Մկրտչյանը, Սամվել Շուխյանը, Նավասարդ Պետրոսյանը, Արմենակ Սարգսյանը, Բաբկեն Վարդանյանը, Հայկ Վարդանյանը, Մուշեղ Տաշչյանը:

Նիստին մասնակցում էին նաև՝համայնքի ղեկավարի տեղակալ Վ. Սաֆարյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Զ. Գևորգյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետ-իրավաբան Ս. Սահակյանը, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Ա. Խաչատրյանը, քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Արսեն Գրիգորյանը:

Միաձայն հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

1. Աշտարակ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

   /Զեկուցող՝ Ա. Խաչատրյան/

2. Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին:

   /Զեկուցող՝ Ա. Խաչատրյան/

3. Աշտարակ համայնքի ավագանու 26.12.2016թ. N 4-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

   /Զեկուցող՝ Ա. Խաչատրյան/

4. Աշտարակ քաղաքի 2017 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

   /Զեկուցող՝ Ա. Խաչատրյան/

5. Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

   /Զեկուցող՝ Զ. Գևորգյան/

6. Աշտարակի համայնքապետարանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց փետրվար ամսվա փոխհատուցման վճարի մասին:

   /Զեկուցող՝ Զ. Գևորգյան/

7. Աշտարակի հմ. 2 <Արևիկ> ՀՈԱԿ-ի տնօրեն Զաբել Խոյեցյանին աշխատանքից ազատելու մասին:

   /Զեկուցող՝ Զ. Գևորգյան/

8. Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին:

/Զեկուցող՝ Ա. Գրիգորյան/

9. Հողամասերի փոխանակություն կատարելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Գրիգորյան/

10. Յուրիկ Բարսեղյանին հողամաս նվիրելու մասին:

/Զեկուցող՝ Ա. Գրիգորյան/

ԼՍԵՑԻՆ - 1 - Աշտարակ համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

Զեկուցումով հանդես եկավ և համայնքի բյուջեի 2016 թվականի կատարման վերաբերյալ հաշվետվությամբ հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Անժելա Խաչատրյանը:

Հաշվետվության վերաբերյալ նյութերն աղյուսակների տեսքով կցվում է սույն արձանագրությանը:

Նիստին ներկա ավագանու անդամներն առաջարկեցին հաստատել ներկայացված հաշվետվությունը:

Քվեարկության արդյունքում այն ընդունվեց միաձայն:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

ԼՍԵՑԻՆ -2 - Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի գույքահարկի և հողի հարկի մասով հարկային արտոնություն տալու մասին

Հարցը ներկայացրեց և զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Անժելա Խաչատրյանը:

Նա առաջարկեց հարկային արտոնություն տալ 9-ը սեփականատիրոջ՝ 249.913 ՀՀ դրամի չափով գույքահարկի մասով և 61.400 ՀՀ դրամ չափով հողի հարկի մասով:

Զեկուցողին հարցեր չտրվեցին:

Որոշակի պարզաբանումներ տվեց համայնքի ղեկավարը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

ԼՍԵՑԻՆ - 3 - Աշտարակ համայնքի ավագանու 26.12.2016թ. N 4-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

Փոփոխության վերաբերյալ հարցը ներկայացրեց Ա. Խաչատրյանը:

Զեկուցողը նշեց, որ փոփոխություն կատարելու անհրաժեշտությունն առաջացել է ի հայտ եկած վրիպակի պատճառով: Արսեն Խաչատրյանին 26.12.2016թ. նիստում տրամադրվել է հարկային արտոնություն /որոշում N 4-Ա/ 33 371 ՀՀ դրամի չափով, սակայն իրականում այն պետք է լիներ 11 371 ՀՀ դրամ:

Առանց քննարկման առաջարկվեց ներկայացված փոփոխությունն ընդունել:

Քվեարկությանը չի մասնակցել Արտաշես Խաչատրյանը:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - *Աշտարակ քաղաքի 2017 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ Ա. Խաչատրյանը:

Նա նշեց, որ փոփոխության անհրաժեշտությունը կապված է նախադպրոցական հիմնարկների գործունեության կարգավորման հետ:

Զեկուցողին հարցեր տվեցին ավագանու անդամներ Մուշեղ Տաշչյանն /մանկապարտեզներ հաճախող երեխաների թվի վերաբերյալ/ ու Արմեն Սարգսյանը /ինչ կարգով է վերահսկվում երեխաների այցելությունները/:

Բարձրացված հարցերին պատասխանեց համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -5 - *Աշտարակի համայնքապետարանի ենթակայության համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակն ու պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին*

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարի խորհրդական Զ. Գևորգյանը:

Զեկուցման վերաբերյալ նյութերը N N 1, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9 հավելվածների տեսքով կցվում է սույն արձանագրությանը:

Զեկուցողը միաժամանակ առաջարկեց հավանություն տալ որոշումն ուժի մեջ մտցնելու ս/թ. մարտի 1-ից:

Որոշակի պարզաբանումներ տվեց համայնքի ղեկավարը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -6 - *Աշտարակի համայնքապետարանի ենթակայության նախադպրոցական ուսումնական հաստատությունների կողմից մատուցված ծառայությունների դիմաց փետրվար ամսվա փոխհատուցման վճարի մասին*

Զեկուցող Զ. Գևորգյանը նշեց, որ հարցը վերաբերվում է ս/թ. փետրվարի 15-ից մինչև մարտի 1-ն ընկած ժամանակահատվածին: Վճարի չափը՝ 2500 ՀՀ դրամ:

Արված առաջարկությունն ընդունվեց միաձայն:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -7 - *Աշտարակի հմ. 2 <Արևիկ> ՀՈԱԿ-ի տնօրեն Զաբել Խոյեցյանին աշխատանքից ազատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավարի խորհրդական Զ. Գևորգյանը:

Զեկուցողը նշեց, որ համայնքի ղեկավարի 09.02.2017թ. N 29-Ա կարգադրությամբ <Արևիկ> ՀՈԱԿ-ի տնօրեն Զ. Խոյեցյանը 2017 թվականի փետրվարի 10-ից ազատվել է աշխատանքից: Այժմ գործող կարգին համապատասխան ավագանուն է ներկայացվում նշված կարգադրությունը և խնդրում այն ընդունել ի գիտություն:

Հարցի կապակցությամբ ելույթ ունեցան և զեկուցողին հարցեր ուղղեցին Աշոտ Հունանյանը, Նորիկ Անդրեասյանը, Մուշեղ Տաշչյանը, Արմենակ Սարգսյանը:

Բարձրացված հարցերին պատասխանեցին Թ. Շահվերդյանն ու Զ. Գևորգյանը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 8 - *Հայաստանի Հանրապետության Աշտարակի համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու թույլտվություն տալու մասին*

Հարցը ներկայացրեց քաղաքաշինության և հողօգտագործման բաժնի առաջատար մասնագետ Արսեն Գրիգորյանը:

Առաջարկվեց համաձայնություն տալ աճուրդ-վաճառքով օտարելու Աշտարակի տեղամասի 514-095, 529-015, 529-007 և 529-011 ծածկագրերից համապատասխանաբար 0.793հա, 0095հա, 0.104հա և 0.0615հա հողամասեր, մեկնարկային գին սահմանելով կադաստրային արժեքի 100%-ը:

Հարցի կապակցությամբ ելույթ ունեցան և զեկուցողին հարցեր ուղղեցին Մ. Տաշչյանը, Ա. Հունանյանը և Ա. Սարգսյանը:

Արմենակ Սարգսյանը ևս մեկ անգամ առաջարկեց նման հարցեր ներկայացնելիս, առավել մատչելի դարձնել օտարվող հողակտորների գտնվելու վայրերը ճշտելու խնդիրները:

/Հատակագծերը կցվում են սույն արձանագրությանը:/

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանումներ տվեց համայնքի ղեկավարը:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -9 - *Հողամասերի փոխանակություն կատարելու մասին*

Հողամասերի փոխանակության առաջարկությունը ներկայացրեց Արսեն Գրիգորյանը:

Զեկուցման մեջ նշվեց, որ համայնքապետարան են դիմել Ռ. Համբարձումյանը /դիմում՝ 24.02.2017թ. հմ. 206/ և Վ. Մկրտչյանը /դիմում՝ 24.02.2017թ. հմ. 205/ իրենց պատկանող հողամասերը փոխանակելու խնդրանքով:

Բաժնի մասնագետների կողմից ուսումնասիրության արդյունքում տրվել է դրական եզրակացություն, որից հետո փոխանակության համար արվել է առաջարկություն /տվյալներն առկա են որոշման նախագծում/:

Զեկուցողին հարցեր տվեցին Մ. Տաշչյանն ու Ա. Սարգսյանը:

Բարձրացված հարցերին պատասխանեցին Ա. Գրիգորյանն ու համայնքի ղեկավար Թ. Շահվերդյանը:

Քվեարկությանը չի մասնակցել Վ. Մկրտչյանը:

10 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն -10 - *Յուրիկ Բարսեղյանին հողամաս նվիրելու մասին*

Օրակարգային վերջին հարցը ևս ներկայացրեց Արսեն Գրիգորյանը:

Նա նշեց, որ Աշտարակ քաղաքի <Արա-2> թաղամասի, 11-րդ փողոցի N 22 հասցեում գտնվող, 02-001-0407-0002 ծածկագրով 600քմ մակերեսով տնամերձ հողամասը, մի շարք հանգամանքներ հաշվի առնելով նպատակահարմար է գտնվել նվիրելու Յուրիկ Հայկազի Բարսեղյանին:

Համայնքի ղեկավարը մանրամասնեց դրա նպատակն ու միաժամանակ պարզաբանեց, որ նվիրառուի համար դրվել են մի շարք պայմաններ, որոնք ամրագրվելու են պայմանագրում:

Հարցի հետ կապված իրենց նկատառումները հայտնեցին Ա. Սարգսյանը, Ա. Հունանյանը, Բ. Վարդանյանը:

Քվեարկության արդյունքում միաձայն ընդունվեց որոշում:

11 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:
Ավագանին աշխատանքներն ավարտեց 2017 թվականի մարտի 14-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

ՆՈՐԻԿ ԱՆԴՐԵԱՍՅԱՆ	ՆԱՎԱՍԱՐԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ԱԶԱՏ ՁԱՔԱՐՅԱՆ	ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԳՍՅԱՆ
ԱՐՏԱՇԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ	ԲԱԲԿԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՎԱՀԱԳՆ ՄԿՐՏՉՅԱՆ	ՀԱՅԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՇՈՒԽՅԱՆ	ՄՈՒՇԵՂ ՏԱՇՉՅԱՆ
ԱՇՈՏ ՀՈՒՆԱՆՅԱՆ	

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԳՐԻԳՈՐ ԴԱՏՈՒՄՅԱՆԸ
ՏՊ
Ա.Հ.